Հանրային կրթության նախարարից յետոյ պրոֆ. Ղամբարեանը արաւ համալսարանի կազմակերպության պատմությունը, որից յետոյ խօսեցին Ա.Սահակեանը, Ուօրդրոպը, գնդ.Հասկելը, Պուադեբարը, գնդ.Զենկևիչը, Ասադուլլա խանը, Հախվերդովը, գօր. Նազարբէգեանը:

«Մի քանի օր առաջ, ասաց Ուօրդրոպը, մենք տօնեցինք մի ուրիշ մեծ դէպք՝ Հայաստանի անկախության դէ ֆակտո ճանաչումը: Ես կարծում եմ, որ առաջին համալսարանի բացումը նոյնքան կարևոր է, որքան և անկախությունը: Պատմության մէջ եղել են դէպքեր, որ պետությունները կարճ ապրեն, բայց չի եղել դէպք, որ մի անգամ բացված համալսարանը կարճ կեանք ունենայ... Ոմանք մեծ կարևորություն էին տալիս դէ ֆակտո բառին. Հայաստանը, յանձին Էջմիածնի ճեմարանի, Վիէննայի ու Վենետիկի վարժարանների արդէն իսկ դէ ֆակտո գոյություն ունէր, և դուք այնքան շատ գիտնականներ և ուսուցչապետներ ունէք, որքան որ պէտք կը լինի ամբիոնների համար»:

Գնդ. Հասկելը. — Ես բախտաւոր եմ ներկայ լինելու այս պատմական դէպքին: Անօգուտ է ասել, որ պատրաստ չեմ խօսելու այս նիւթի մասին, որն իմ գործունէության սահմանից դուրս է: Ներկայ Հայաստանում կատարուող դէպքերը, աչքի առաջ ունենալով պետության հանդիպած դժուարությունները, շատ նշանակալից են: Եւ մեծ գոհացում է ներշնչում, որ գոյության ծանր հոգսերը չեն ճնշում ժողովրդի կրթության ծարաւը: Եւրոպայի և Ամերիկայի շատ քաղաքներում մենք հանդիպում ենք շատ հայերի, որ համալսարաններում բարձր կրթություն են ստանում, և այդ տեղ է իր պտուղները. մի շարք աչքի ընկնող հայեր կան, որ կարևոր տեղ ունեն և որոնց անունները յայտնի են ամենքին: Այդ համալսարաններում սովորող անձինք յաջողություն են ունեցել, բայց Հայաստանի համալսարանում մարդիկ պէտք է դաստիարակուեն աւելի հայրենասէր ոգով, քան արտասահմանում: Գլխաւոր բանը, որով ես շատ շահագրգռուած եմ — որ հայ ժողովուրդը լինի անկախ քաղաքականապէս, տնտեսապէս և կրթությամբ (բուռն ծափեր): Ես յոյս ունեմ, որ կարճ ժամանակում Հայաստանը բոլորովին ազատ կը լինի և կախում չի ունենայ ոչ ոքից (բուռն ծափեր): Եթէ կայ որև է կարիք, որին պէտք լինի օգնել Ամերիկայի կամ իմ ներկայացրած ուրիշ պետություններից, ես հաճոյքով կիմացնեմ նրանց և կը յաջողեցնեմ նրանց օգնությունը: Ճանաչելով այս գործի գլուխ կանգնածներին՝ ես համոզուած եմ, որ համալսարանը անպայման յաջողություն կունենայ»:

Հասկելի ճառը հանդիսականների կողմից ընդունուեց առանձին ոգեւորությամբ: Ջերմ խօսքերով արտայայտուեցին և միւս հռետորները, որոնց ճառերը ընդհատում էին որոտընդոստ ծափերով:

Ողջոյնի ճառերից յետոյ, Ս. Տիգրանեանը կարդաց արտասահմանից և Հայաստանի զանազան կողմերից ստացուած հարիւրաւոր հեռագիրներից մի քանիսը: Շնորհաւորում էին Վրաստանի դիւ. ներկ. Գ. Մախարաձէն, Վրաստանի հանր. կրթ. նախարարի պաշտօնակատար Ցինցաձէն, գօրավար Կարալովը և ուրիշներ:

Ապա համալսարանի ուսուցչապետ Մեսրոպ եպ.-ը ակադեմական ճառ արտասանեց՝ «Հայ վանքերի նշանակությունը Հայաստանի կուլտուրական գործերում» նիւթի մասին, որից յետոյ խօսեցին բանաստեղծ Ց. Ցովհան-